34-K
Ա 879
38
Հ-25

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ»

# 1934 Թ. ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐ-ԳՈՎ ՄԻՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐ-ԴԻ ՅԵՎ ՀԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈ-ՇՈՒՄԸ

...ան Երևան Գառլիտ 2250, Գլավլիտ 259(բ) Տիրաժ 400

38
Հ-25

# 1934 Թ. ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐՈՎ ՄԻՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Ի կատարումն ՍՍՅՄ Հ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և ՀամԿ(բ)Կ Անդրկովկասյան Յերկրային Կոմիտեյի 1933 թվականի օգոստոսի 29-ի «1934 թվականին պետությանը պարտադիր կարգով միս հանձնելու վերաբերյալ» վորոշման, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն վորոշում են.—

1. 1934 թվականի համար (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը) ըստ շրջանների սահմանել պետությանը՝ պետական գներով, պարտադիր՝ հարկի ուժ ունեցող կարգով միս հանձնելու ներքոհիշյալ նորմաները՝ անասնաբուծական – ապրանքային ֆերմաներ չունեցող կոլտնտեսության անդամ տնտեսությունների համար առանձին, անասնաբուծական ապրանքային ֆերմաներ ունեցող կոլտնտեսությունների անդամ տնտեսությունների համար առանձին և անհատական գյուղացիական տնտեսությունների համար առանձին (կիլոգրամներով կենդանի քաշով).

| Շ ր ջ ա ն ն ե ր | Անասնաբուծական ապրանքային ֆերմաներ չունեցող կոլտնտեսությունների անդամ տնտեսությունների համար | Անասնաբուծական ապրանքային ֆերմաներ ունեցող կոլտնտեսությունների անդամ տնտեսությունների համար | Անհատական գյուղացիական տնտեսութ. համար |
|---|---|---|---|
| 1-ին խումբ | | | |
| Ապարան | 35 | 19 | 48 |
| Լենինական | » | » | » |
| Ախտա | » | » | » |
| Բասարգեչար | 35 | 19 | 48 |
| Դիլիջան | » | » | » |
| Ղարաքիլիսա | » | » | » |
| Սևան | » | » | » |
| 2-րդ խումբ | | | |
| Աղբաբա | 30 | 16 | 44 |
| Փաշալու | » | » | » |
| Ստեփանավան | » | » | » |
| Ալլահվերդի | » | » | » |
| Արթիկ | » | » | » |
| Գորիս | » | » | » |
| Իջևան | » | » | » |
| Ղափան | » | » | » |
| Քեշիշքենդ | » | » | » |
| Կոտայք | » | » | » |
| Մարտունի | » | » | » |
| Նոր Բայազետ | » | » | » |
| Թալին | » | » | » |
| Շամշադին | » | » | » |
| 3-րդ խումբ | | | |
| Աշտարակ | 24 | 14 | 31 |
| Վաղդպատ | » | » | » |
| Վեդի | » | » | » |
| Ղամարլու | » | » | » |
| Ղուրդուղուլի | » | » | » |
| Մեղրի | » | » | » |



APR

2. Սահմանել անհատական տնտեսությունների ու կոլտնտեսության անդամ տնտեսությունների կողմից պետությանը միս հանձնելու հետևյալ օրացուցային ժամկետները (տոկոսներով հաշված տարեկան պլանից).

Առաջին յեռամսյակ . . . . 35 տոկ.
Յերկրորդ » . . . . 10 »
Յերրորդ » . . . . 20 »
Չորրորդ » . . . . 35 »

ր 9 SEP 2013

3. Անասնաբուծական ապրանքային ֆերմաների և կոլտնտե-
սությունների հանրայնացված հոտերի համար սահմանել պետու-
թյանը պարտադիր՝ հարկի ուժ ունեցող կարգով միս հանձնե-
լու հետևյալ նորմաները (կիլոգրամներով) հաշված կենդանի
քաշով.
Խոշոր յեղջերավոր անասուններ՝ 20 կլգ. յուրաքանչյուր կո-
վից և սաերջից:
Խոզեր՝ 80 կլգ. յուրաքանչյուր մայր խոզից:
Վոչխարներ՝ 8 կլգ. յուրաքանչյուր մայր վոչխարից:
Հանձնվելիք մսի չափը վորոշվում է՝ առ 1933 թ. սեպտեմ-
բերի 1-ը յեղած անասունների թվի համաձայն:
Կոլտնտեսային ֆերմաների կողմից հանձնվելիք մսի քանա-
կությունը վորոշելիս, հաշվի չեն առնվում ցեղական անասուն-
ների գրքի մեջ գրանցված՝ ցեղական անասունները:
4. Սահմանել յուրաքանչյուր կոլտնտեսության կողմից պե-
տությանը միս հանձնելու տարեկան պարտավորությունների կա-
տարման հետևյալ որացուցային ժամկետները (տոկոսներով՝ յել-
նելով տարեկան նորմայից).

| | Առաջին յեռամս. | Յերկրորդ յեռամս. | Յերրորդ յեռամս. | Չորրորդ յեռամս. |
|---|---|---|---|---|
| Խոշոր յեղջերավոր անաս. | 35 | 10 | 25 | 30 |
| Խոզեր | 30 | 15 | 20 | 35 |
| Վոչխարներ | 25 | — | 35 | 40 |

5. Իշխանության տեղական մարմիններին անպայման արգել-
վում է կոլտնտեսային ֆերմաների, կոլտնտեսությունների հան-
րայնացված հոտերի, կոլտնտեսության անդամ տնտեսություն-
ների և անհատական տնտեսությունների համար սահմանված
պետությանը միս հանձնելու շրջանային նորմաները փոփոխու-
թյան յենթարկել:
6. Սահմանել, վոր կոլտնտեսության անդամ տնտեսություն-
ները և անհատական տնտեսությունները կարող են պետությանը
միս հանձնելու իրենց պարտավորությունները կատարել անասուն-
ների ու թռչունների բոլոր տեսակներով, սակայն անպայման
կենդանի վիճակում: Միս հանձնողներն իրենց պարտավորու-
թյունները կատարելու համար կարող են միանալ և հանձնումը
կատարել խմբովին:
Կոլտնտեսությունները կարող են միս հանձնելու իրենց պար-
տավորությունները կատարել անասունների բոլոր տեսակներով,
սակայն խոզերը պետք է հանձնվեն սահմանված նորմաների հա-
մաձայն՝ առանց այլ անասուններով փոխարինելու:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
56348-66

| | | | |
|---|---|---|---|
| Բասարգեչար | 35 | 19 | 48 |
| Դիլիջան | » | » | » |
| Ղարաքիլիսա | » | » | » |
| Սիսիան | » | » | » |
| 2-րդ խումբ | | | |
| Ագբաբա | 30 | 16 | 44 |
| Փաշալու | » | » | » |
| Ստեփանավան | » | » | » |
| Ալլահվերդի | » | » | » |
| Արթիկ | » | » | » |
| Գորիս | » | » | » |
| Իջևան | » | » | » |
| Ղափան | » | » | » |
| Քեշիշքենդ | » | » | » |
| Կոտայք | » | » | » |
| Մարտունի | » | » | » |
| Նոր Բայազետ | » | » | » |
| Թալին | » | » | » |
| Շամշադին | » | » | » |
| 3-րդ խումբ | | | |
| Աշտարակ | 24 | 14 | 31 |
| Վաղարշապատ | » | » | » |
| Վեդի | » | » | » |
| Ղամարլու | » | » | » |
| Զուրնաբաշլու | » | » | » |
| Մեղրի | » | » | » |

2. Սահմանել անհատական տնտեսությունների ու կոլտնտե-
սության անդամ տնտեսությունների կողմից պետությանը միս
հանձնելու հետևյալ որացուցային ժամկետները (տոկոսներով
հաշված տարեկան պլանից).

Առաջին յեռամսյակ . . . . 35 տոկ.
Յերկրորդ » . . . . 10 »
Յերրորդ » . . . . 20 »
Չորրորդ » . . . . 35 »

3. Անասնաբուծական ապրանքային ֆերմաների և կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի համար սահմանել պետությանը պարտադիր՝ հարկի ուժ ունեցող կարգով միս հանձնելու հետևյալ նորմաները (կիլոգրամներով) հաշված կենդանի քաշով.

Խոշոր յեղջերավոր անասուններ՝ 20 կլգ. յուրաքանչյուր կովից և ստերջից:

Խոզեր՝ 80 կլգ. յուրաքանչյուր մայր խոզից:

Վոչխարներ՝ 8 կլգ. յուրաքանչյուր մայր վոչխարից:

Հանձնվելիք մսի չափը վորոշվում է՝ առ 1933 թ. սեպտեմբերի 1-ը յեղած անասունների թվի համաձայն:

Կոլտնտեսային ֆերմաների կողմից հանձնվելիք մսի քանակությունը վորոշելիս, հաշվի չեն առնվում ցեղական անասունների գրքի մեջ գրանցված՝ ցեղական անասունները:

4. Սահմանել յուրաքանչյուր կոլտնտեսության կողմից պետությանը միս հանձնելու տարեկան պարտավորությունների կատարման հետևյալ որացուցային ժամկետները (տոկոսներով՝ ելնելով տարեկան նորմայից).

| | Առաջին յեռամս. | Յերկրորդ յեռամս. | Յերրորդ յեռամս. | Չորրորդ յեռամս. |
|---|---|---|---|---|
| Խոշոր յեղջերավոր անաս. | 35 | 10 | 25 | 30 |
| Խոզեր | 30 | 15 | 20 | 35 |
| Վոչխարներ | 25 | — | 35 | 40 |

5. Իշխանության տեղական մարմիններին անպայման արգելվում է կոլտնտեսային ֆերմաների, կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի, կոլտնտեսության անդամ տնտեսությունների և անհատական տնտեսությունների համար սահմանված՝ պետությանը միս հանձնելու շրջանային նորմաները փոփոխության յենթարկել:

6. Սահմանել, վոր կոլտնտեսության անդամ տնտեսությունները և անհատական տնտեսությունները կարող են պետությանը միս հանձնելու իրենց պարտավորությունները կատարել անասունների ու թռչունների բոլոր տեսակներով, սակայն անպայման կենդանի վիճակում: Միս հանձնողներն իրենց պարտավորությունները կատարելու համար կարող են միանալ և հանձնումը կատարել խմբովին:

Կոլտնտեսությունները կարող են միս հանձնելու իրենց պարտավորությունները կատարել անասունների բոլոր տեսակներով, սակայն խոզերը պետք է հանձնվեն սահմանված նորմաների համաձայն՝ առանց այլ անասուններով փոխարինելու:



7. Առաջարկել բոլոր շրջգործկոմներին և կուսշրջկոմներին՝ յելնելով մսի հանձնման վերաբերյալ սահմանված շրջանային նորմաներից, մինչև 1933 թ. նոյեմբերի 10-ը վորոշել մսի հանձնման պլաններն ըստ իրենց շրջանների:

Պարտավորեցնել շրջհողբաժիններին՝ վոչ ուշ, քան մինչև 1933 թ. նոյեմբերի 10-ն առանձին կոլտնտեսային ֆերմաներին էջեցնել նրանց կողմից պետությանը հանձնվելիք մսի պլանները:

Պարտավորեցնել գյուղխորհուրդներին՝ յելնելով նախորդ հոդվածներով սահմանված մսի հանձնման նորմաներից՝ կազմել անասուններ հանձնողների ցուցակը, մատնանշելով հանձնման յենթակա մսի քանակն ու ժամկետները, հայտնելով այդ մասին առանձին տնտեսություններին (միս հանձնողներին)՝ վերջիններիս ստորագրությամբ:

8. Պետությանը միս հանձնելու վերաբերյալ իրենց պարտավորություններն օրենքով սահմանված ժամկետներին չկատարող կոլտնտեսությունները, կոլտնտեսության անդամ տնտեսությունները և անհատական տնտեսությունները՝ դրամական տուգանքի յեն յենթարկվում իրենց պարտավորությունների չկատարած մասի շուկայական արժեքի չափով՝ անվիճելի կարգով գանձելով նրանցից հանձնվելիք մսի քանակությունը:

9. Կոլտնտեսությունների հանրայնացված հոտերում և կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում անասունների ճիշտ թիվը թաքցնելու համար, քրեական պատասխանատվության յենթարկել կոլտնտեսությունների վարչությունների նախագահներին և կոլտնտեսությունների անասնաբուծական ֆերմաների վարիչներին:

10. Այս վորոշման կենսագործման պարտավորությունը դնել Մատժողկոմատի և նրա շրջանային լիազորների վրա:

11. ՀՍԽՀ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թվականի նոյեմբերի 3-ի վորոշմամբ սահմանված՝ պետությանը պարտադիր կարգով միս հանձնելու իրենց՝ 1932 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1934 թ. հունվարի 1-ը ժամանակամիջոցի պարտավորությունները լրիվին կատարած կոլտնտեսություններին, կոլտնտեսության անդամ տնտեսություններին ու անհատական տնտեսություններին իրավունք վերապահել՝ ի հաշիվ 1934 թ. տարեկան պարտավորությունների, սկսած 1933 թ. հոկտեմբերի 1-ից կատարել սույն վորոշմամբ նախատեսված պարտավորությունները, մինչ ժամկետից առաջ հանձնելու կարգով:

12. Իշխանության տեղական մարմիններին, նաև մթերող կազմակերպություններին անպայման արգելել կոլտնտեսային ապրանքային ֆերմաների, կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի և կոլտնտեսականների ու մենատնտեսների վրա դնել այն-

7. Առաջարկել բոլոր շրջգործկոմներին և կուսշրջկոմներին՝ ելնելով մսի հանձնման վերաբերյալ սահմանված շրջանային նորմաներից, մինչև 1933 թ. նոյեմբերի 10-ը վորոշել մսի հանձնման պլաններն ըստ իրենց շրջանների:

Պարտավորեցնել շրջհողբաժիններին՝ վոչ ուշ, քան մինչև 1933 թ. նոյեմբերի 10-ն առանձին կոլտնտեսային ֆերմաներին իջեցնել նրանց կողմից պետությանը հանձնվելիք մսի պլանները:

Պարտավորեցնել գյուղխորհուրդներին՝ ելնելով նախորդ հոդվածներով սահմանված մսի հանձնման նորմաներից՝ կազմել անասուններ հանձնողների ցուցակը, մատնանշելով հանձնման ենթակա մսի քանակն ու ժամկետները, հայտնելով այդ մասին առանձին տնտեսություններին (միս հանձնողներին)՝ վերջիններիս ստորագրությամբ:

8. Պետությանը միս հանձնելու վերաբերյալ իրենց պարտավորություններն օրենքով սահմանված ժամկետներին չկատարող կոլտնտեսությունները, կոլտնտեսության անդամ տնտեսությունները և անհատական տնտեսությունները՝ դրամական տուգանքի յեն յենթարկվում իրենց պարտավորությունների չկատարած մասի շուկայական արժեքի չափով՝ անվիճելի կարգով գանձելով նրանցից հանձնվելիք մսի քանակությունը:

9. Կոլտնտեսությունների հանրայնացված հոտերում և կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում անասունների ճիշտ թիվը թաքցնելու համար, քրեական պատասխանատվության յենթարկել կոլտնտեսությունների վարչությունների նախագահներին և կոլտնտեսությունների անասնաբուծական ֆերմաների վարիչներին:

10. Այս վորոշման կենսագործման պարտավորությունը դնել Մատժողկոմատի և նրա շրջանային լիազորների վրա:

11. ՀՍԽՀ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թվականի նոյեմբերի 3-ի վորոշմամբ սահմանված՝ պետությանը պարտադիր կարգով միս հանձնելու իրենց՝ 1932 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1934 թ. հունվարի 1-ը ժամանակամիջոցի պարտավորությունները լրիվին կատարած կոլտնտեսություններին, կոլտնտեսության անդամ տնտեսություններին ու անհատական տնտեսություններին իրավունք վերապահել՝ ի հաշիվ 1934 թ. տարեկան պարտավորությունների, սկսած 1933 թ. հոկտեմբերի 1-ից կատարել սույն վորոշմամբ նախատեսված պարտավորությունները, միսը ժամկետից առաջ հանձնելու կարգով:

12. Իշխանության տեղական մարմիններին, նաև մթերող կազմակերպություններին անպայման արգելել կոլտնտեսային ապրանքային ֆերմաների, կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի և կոլտնտեսականների ու մենատնտեսների վրա դնել այն-



պիսի պարտավորություններ, վորոնք գերազանցում են այս վորոշմամբ նախատեսված նորմաները:

Արգելել նաև իրենց պարտավորությունները ժամկետից առաջ կատարած կոլտնտեսություններին մսի հանձնման լրացուցիչ կամ հանդիպական պլաններ տալ. իրենց պարտավորությունները կանոնավոր կատարող տնտեսություններին լիակատար հնարավորություն տալ ազատորեն տնօրինելու մթերքների ավելցուկները:

Նախազգուշացնել բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպություններին, վոր հանդիպական պլաններ տալու համար մեղավորները կենթարկվեն քրեական պատասխանատվության:

13. Առաջարկել կուսշրջկոմներին և ՄՏԿ-ների քաղբաժիններին՝ ծավալել մասսայական-բացատրական աշխատանք գյուղացիության մեջ 1934 թվականին պետությանը միս հանձնելու մասին:

ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահ՝ Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի
քարտուղար՝ Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ղեսի պարտավորություններ, վորոնք գերազանցում են այս վորոշմամբ նախատեսված նորմաները:

Արգելել նաև իրենց պարտավորությունները ժամկետից առաջ կատարած կոլտնտեսություններին մսի հանձնման լրացուցիչ կամ հանդիպական պլաններ տալ. իրենց պարտավորությունները կանոնավոր կատարող տնտեսություններին լիակատար հնարավորություն տալ ազատորեն տնօրինելու մթերքների ավելցուկները:

Նախազգուշացնել բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպություններին, վոր հանդիպական պլաններ տալու համար մեղավորները կենթարկվեն քրեական պատասխանատվության:

13. Առաջարկել կուսշրջկոմներին և ՄՏԿ-ների քաղբաժիններին՝ ծավալել մասսայական-բացատրական աշխատանք գյուղացիության մեջ 1934 թվականին պետությանը միս հանձնելու մասին:

ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահ՝ Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի
քարտուղար՝ Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ



Հաստատված է ՀՍԽՀ Ժողկոմխորհի
կողմից հոկտեմբերի 3-ին 1933 թվ.

## Հ Ր Ա Հ Ա Ն Գ

## ՀՍԽՀ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ 1934 Թ. ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՄԻՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. 1934 թվականին պետությանը պարտադիր կարգով միս հանձնելու ՀՍԽՀ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1933 թվի հոկտեմբերի 31-ի վորոշումը կյանքում կիրառում է Մատժողկոմատը՝ Հայմթերեստի և նրա տեղական բաժանմունքների միջոցով:

Հայմթերեստն իր հերթին միս հանձնելու պարտավորության դիմաց անասունների, թռչունների ընդունելությունը կատարում է իր սեփական ցանցի անասուն ընդունող կայանների միջոցով և Հայկոոպի ցանցի միջոցով՝ կնքված պայմանագրերի համաձայն:

### Ա. ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՄԻՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԸ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻՆ ՈՒ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Գյուղերում և գյուղական տիպի վայրերում պետությանը պարտադիր կարգով միս հանձնելու յենթակա յեն բոլոր մենատնտեսներն ու կոլտնտեսականները՝ տվյալ շրջանի համար սահմանված նորմաներով, անկախ նրանց ունեցվածքային դրությունից և այն հանգամանքից, թե նրանք անասուններ ունեն, թե վոչ:

2. Պետությանը պարտադիր կարգով միս հանձնելուց ազատվում են՝

ա) Բոլոր այն տնտեսությունները, վորոնք բնակվում են Կենտգործկոմի կողմից հաստատված քաղաքատիպ վայրերում, բանվորական ու մերձքաղաքային ավաններում, նաև ամառանոցներում ու 1932—33 թ. գյուղատնտեսական հարկման չեն յենթարկվել:

բ) Գյուղական վայրերում բնակվող այն տնտեսությունները, վորոնք չունեն իրենց աղալակները (տուն, խրճիթ), չեն ոգտվում

Հաստատված է ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից հոկտեմբերի 3-ին 1933 թվ.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

## ՀՍԽՀ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ 1934 Թ. ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՄԻՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. 1934 թվականին պետությանը պարտադիր կարգով միս հանձնելու ՀՍԽՀ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1933 թվի հոկտեմբերի 31-ի վորոշումը կյանքում կիրառում է Մատմդկոմառը՝ Հայմիսարեստի և նրա տեղական բաժանմունքների միջոցով:

Հայմիսարեստն իր հերթին միս հանձնելու պարտավորության դիմաց անասունների, թռչունների ընդունելությունը կատարում է իր սեփական ցանցի անասուն ընդունող կայանների միջոցով և Հայկոոպի ցանցի միջոցով՝ կնքված պայմանագրերի համաձայն:

### Ա. ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՄԻՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԸ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻՆ ՈՒ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Գյուղերում և գյուղական տիպի վայրերում պետությանը պարտադիր կարգով միս հանձնելու ենթակա յեն բոլոր մենատնտեսներն ու կոլտնտեսականները՝ տվյալ շրջանի համար սահմանված նորմաներով, անկախ նրանց ունեցվածքային դրությունից և այն հանգամանքից, թե նրանք անասուններ ունեն, թե վոչ:

2. Պետությանը պարտադիր կարգով միս հանձնելուց ազատվում են՝

ա) Բոլոր այն տնտեսությունները, վորոնք բնակվում են Կենտգործկոմի կողմից հաստատված քաղաքատիպ վայրերում, բանվորական ու մերձքաղաքային ավաններում, նաև ամառանոցներում ու 1932—33 թ. գյուղատնտեսական հարկման չեն յենթարկվել:

բ) Գյուղական վայրերում բնակվող այն տնտեսությունները, վորոնք չունեն իրենց ագարակները (տուն, խրճիթ), չեն ազատվում



հողային հասարակություններից, ցանքի տարածություն չունեն և գյուղատնտեսական հարկման չեն յենթարկվում:

գ) Գյուղական վայրերում ապրող գյուղատնտեսները, կոոպերատիվները, ագրոնոմները, ուսուցիչները, ճարտարապետները, տեխնիկները և ՃՏՍ-ի անդամ մասնագետները, վորոնք ցանքի տարածություն չեն ստանում և գյուղհարկով չեն հարկադրվում:

դ) Խորհտնտեսության մշտական բանվոր-ծառայողները, վորոնք ապրում են խորհտնտեսության սահմաններում, իրենց աշխատանքի վայրում, անգամ, յեթե նրանք ունենան անասուններ:

յե) Ցանքի տարածություն չունեցող և գյուղհարկով չհարկադրվող յերկաթուղու ընդգրկված գոտում ապրող յերկաթուղային բանվորներն ու ծառայողները:

զ) Ցանքի տարածություն չունեցող և գյուղհարկով չհարկվող թոշակառուները:

3. Այն տնտեսությունները, վորոնք միս հանձնելու պարտավորագրեր ստանալուց հետո յեն բաժանվում, միս հանձնելու նոր պարտավորագրեր չեն ստանում, այլ միասին կատարում են մինչ բաժանվելն իրենց վրա դրված պարտավորությունը:

4. Կոլտնտեսություններից դուրս յեկած կոլտնտեսականներն իրենց պարտավորությունները կատարում են մենատնտեսների համար սահմանված տարեկան նորմաներով:

1934 թվի հունվարի 1-ից հետո կոլտնտեսություն մտած մենատնտեսներն իրենց պարտավորությունները կատարում են մենատնտեսների տարեկան նորմաներով:

5. Կուլակային տնտեսությունների պարտադիր կարգով միս հանձնելու նորմաները սահմանվում է տվյալ շրջանի մենատնտեսների նորմայի մեկ ու կեսի չափով:

6. Նոյեմբերի 10-ից վոչ ուշ գյուղխորհուրդները սահմանված ձևով (ձև № 1), առանց բացառության, կազմում են տվյալ գյուղի խորհրդի տերիտորիայում յեղած բոլոր տնտեսությունների ցուցակները, բաժանելով այն հետևյալ խմբերի.

ա) Անասնապահական ապրանքային ֆերմա չունեցող կոլտնտեսությունների կոլտնտեսականները:

բ) Հողային մարմիններում մինչև 1933 թվի սեպտեմբերի 1-ը ձևակերպված անասնապահական ապրանքային ֆերմա ունեցող կոլտնտեսությունների կոլտնտեսականները:

գ) Անհատական տնտեսությունները:

դ) Կուլակային տնտեսությունները:

յե) Այս հրահանգի «Ա» մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտադիր կերպով միս հանձնելու պարտավորությանը վոչ-յենթակա տնտեսությունները (ձև № 2):

հողային հատկացումներից, ցանքի առաջադրանք չունեն և գյու-
ղատնտեսական հարկման չեն յենթարկվում:

գ) Գյուղական վայրերում ապրող գյուղատնտեսները, զոո-
տեխնիկները, անասնաբուժները, բժիշկները, ուսուցիչները, ճար-
տարապետները, տեխնիկները և ՃՏՄ-ի անդամ մասնագետները,
վորոնք ցանքի առաջադրանք չեն ստանում և գյուղհարկով չեն
հարկադրվում:

դ) Խորհտնտեսության մշտական բանվոր-ծառայողները,
վորոնք ապրում են խորհտնտեսության սահմաններում, իրենց
աշխատանքի վայրում, անգամ, յեթե նրանք ունենան անասուն-
ներ:

յե) Ցանքի առաջադրանք չունեցող և գյուղհարկով չհարկա-
դրվող յերկաթուղու չեղոքացված գոտում ապրող յերկաթուղա-
յին բանվորներն ու ծառայողները:

զ) Ցանքի առաջադրանք չունեցող և գյուղհարկով չհարկվող
թոշակառուները:

3· Այն տնտեսությունները, վորոնք միս հանձնելու պարտա-
վորագրեր ստանալուց հետո յեն բաժանվում, միս հանձնելու նոր
պարտավորագրեր չեն ստանում, այլ միատեղ կատարում են մինչ
բաժանվելն իրենց վրա դրված պարտավորությունը:

4· Կոլտնտեսություններից դուրս յեկած կոլտնտեսականներն
իրենց պարտավորությունները կատարում են մենատնտեսների հա-
մար սահմանված տարեկան նորմաներով:

1934 թվի հունվարի 1-ից հետո կոլտնտեսություն մտած մե-
նատնտեսներն իրենց պարտավորությունները կատարում են մե-
նատնտեսների տարեկան նորմաներով:

5· Կուլակային տնտեսությունների պարտադիր կարգով միս
հանձնելու նորմաները սահմանվում է տվյալ շրջանի մենատնտես-
ների նորմայի մեկ ու կեսի չափով:

6· Նոյեմբերի 10-ից վոչ ուշ գյուղխորհուրդները սահմանված
ձևով (ձև № 1), առանց բացառության, կազմում են տվյալ գյու-
ղի խորհրդի տերիտորիայում յեղած բոլոր տնտեսությունների
ցուցակները, բաժանելով այն հետևյալ խմբերի·

ա) Անասնապահական ապրանքային ֆերմա չունեցող կոլ-
տնտեսությունների կոլտնտեսականները:

բ) Հողային մարմիններում մինչև 1933 թվի սեպտեմբերի 1-ը
ձևակերպված անասնապահական ապրանքային ֆերմա ունեցող
կոլտնտեսությունների կոլտնտեսականները:

գ) Անհատական տնտեսությունները:

դ) Կուլակային տնտեսությունները:

յե) Այս հրահանգի «Ա» մասի 2-րդ կետի համաձայն՝ պար-
տադիր կերպով միս հանձնելու պարտավորությանը վոչ-յենթակա
տնտեսությունները (ձև № 2):



7· Պարտադիր կերպով միս հանձնելու պարտավորությանը
վոչ-յենթակա տնտեսությունների ցուցակը հաստատվում է շրջ-
գործկոմի նախագահության կողմից: Հայմթերքատի տեղի լիա-
զորի մասնակցությամբ ընտրովի ստուգում կատարելուց հետո:
Միսթերքատի շրջանային լիազորը պարտավոր է վոչ ուշ, քան մին-
չև նոյեմբերի 10-ն՝ ընտրովի կարգով ստուգել գյուղխորհրդի
կազմած տնտեսությունների ցուցակի ճշտությունը՝ ըստ առան-
ձին խմբերի և ստուգման արդյունքները հայտնել շրջգործկոմի
նախագահության:

8· Վոչ ուշ ս.թ. նոյեմբերի 10-ից գյուղխորհուրդը պարտա-
վոր է յուրաքանչյուր կոլտնտեսականի, անհատական և կուլա-
կային տնտեսության գլխավորին կամ այդ ժամանակամիջոցում
նրան փոխարինող ընտանիքի անդամ անձամբ հանձնել պետու-
թյանը միս հանձնելու պարտավորագրերը, ցուցակում նրան ստո-
րագրել տալով իրենց անվան դիմաց: Միսթերքատի շրջանային
լիազորը գյուղխորհրդի նախագահին է հանձնում պետությանը
պարտադիր կարգով միս հանձնելու համապատասխան քանակի
պարտավորագրերը (ձև № 3) և հաշվետվության ձևեր (ձև
№ 4):

9· Գյուղխորհուրդը պարտավոր է պարտավորագրերում գրել՝

ա) Տնտեսության բնակավայրը (գյուղ, կոլտնտեսություն):

բ) Վո՞ր խմբին է պատկանում տվյալ տնտեսությունը (կոլ-
տնտեսական, մենատնտես, կուլակային տնտեսություն):

գ) Տնտեսության գլխավոր ազգանունը, անունը, հայրա-
նունը:

դ) Միս հանձնելու տարեկան և յեռամսյակային նորմաները՝
կենդանի քաշով, կիլոգրամներով:

յե) Հանձնելու վայրը (Միսթերքատի ընդունման կայանը):

զ) Միսն ընդունման կայանին հանձնելու յեռամսյա ժամկետ-
ները (վոչ ուշ յուրաքանչյուր յեռամսյակի կեսից):

10· Կոլտնտեսականներին և մենատնտեսներին հանձնած պար-
տավորագրերն ստորագրում է գյուղխորհրդի նախագահը:

11· Կոլտնտեսական և անհատական տնտեսության գլխավորի
կամ վերջինիս փոխարինողի կողմից պարտավորագիրն ստանալուց
կամ ստորագրելուց հրաժարվելու դեպքում, գյուղխորհրդի նա-
խագահն արձանագրություն է կազմում և պարտավորագիրը դրա-
նով համարվում է հանձնված:

12· Համաձայն այս հրահանգի «Ա» գլխի 6-րդ կետի, տնտե-
սությունների անվանացուցակները գյուղխորհուրդները կազմում
են յերկու օրինակից, վորոնցից մեկը պարտավորագրերը տերերին
հանձնելուց հետո, տրվում է անասուն ընդունող կայանի վարի-
չին՝ ցուցակում նշելով տրված պարտավորագրերի համարը:

7. Պարտադիր կերպով միս հանձնելու պարտավորությանը վոչ-յենթակա տնտեսությունների ցուցակը հաստատվում է շրջգործկոմի նախագահության կողմից: Հայմսթրեստի տեղի լիազորի մասնակցությամբ ընտրովի ստուգում կատարելուց հետո: Միսթրեստի շրջանային լիազորը պարտավոր է վոչ ուշ, քան մինչև նոյեմբերի 10-ն՝ ընտրովի կարգով ստուգել գյուղխորհրդի կազմած տնտեսությունների ցուցակի ճշտությունը՝ ըստ առանձին խմբերի և ստուգման արդյունքները հայտնել շրջգործկոմի նախագահության:

8. Վոչ ուշ ս. թ. նոյեմբերի 10-ից գյուղխորհուրդը պարտավոր է յուրաքանչյուր կոլտնտեսականի, անհատական և կուլակային տնտեսության գլխավորին կամ այդ ժամանակամիջոցում նրան փոխարինող ընտանիքի ավագ անդամին հանձնել պետությանը միս հանձնելու պարտավորագրերը, ցուցակում նրան ստորագրել տալով իրենց անվան դիմաց: Միսթրեստի շրջանային լիազորը գյուղխորհրդի նախագահին է հանձնում պետությանը պարտադիր կարգով միս հանձնելու համապատասխան քանակի պարտավորագրերը (ձև № 3) և հաշվետվության ձևեր (ձև № 4):

9. Գյուղխորհուրդը պարտավոր է պարտավորագրերում գրել՝

ա) Տնտեսության բնակավայրը (գյուղ, կոլտնտեսություն):

բ) Վո՞ր խմբին է պատկանում տվյալ տնտեսությունը (կոլտնտեսական, մենատնտես, կուլակային տնտեսություն):

գ) Տնտեսության գլխավոր ազգանունը, անունը, հայրանունը:

դ) Միս հանձնելու տարեկան և յեռամսյակային նորմաները՝ կենդանի քաշով, կիլոգրամներով:

ե) Հանձնելու վայրը (Միսթրեստի ընդունման կայանը):

զ) Միսն ընդունման կայանին հանձնելու յեռամսյա ժամկետները (վոչ ուշ յուրաքանչյուր յեռամսյակի կեսից):

10. Կոլտնտեսականներին և մենատնտեսներին հանձնած պարտավորագրերն ստորագրում է գյուղխորհրդի նախագահը:

11. Կոլտնտեսական և անհատական տնտեսության գլխավորի կամ վերջինիս փոխարինողի կողմից պարտավորագիրն ստանալուց կամ ստորագրելուց հրաժարվելու դեպքում, գյուղխորհրդի նախագահն արձանագրություն է կազմում և պարտավորագիրը դրանով համարվում է հանձնված:

12. Համաձայն այս հրահանգի «Ա» գլխի 6-րդ կետի, տնտեսությունների անվանացուցակները գյուղխորհուրդները կազմում են յերկու օրինակից, վորոնցից մեկը պարտավորագրերը տերերին հանձնելուց հետո, տրվում է անասուն ընդունող կայանի վարիչին՝ ցուցակում նշելով տրված պարտավորագրերի համարը:



Յերկրորդ օրինակը մնում է գյուղխորհրդում: Միսթրեստի շրջ. լիազորը մինչև ս. թ. նոյեմբերի 20-ը պարտավոր է ընտրովի ձևով ստուգել գյուղխորհրդի կողմից պարտավորագրեր հանձնելու ճշտությունը (իսկությունը):

13. Տնտեսությունների ցուցակները սխալ կազմելու, պարտավորագրերի սխալ լրացնելու կամ բոլոր տնտեսություններին անխտիր պարտավորագրեր չհանձնելու (բացի ներկա հրահանգի Ա. մասի 2-րդ կետի համաձայն՝ միս հանձնելուց ազատվող տնտեսություններից) համար գյուղխորհրդի նախագահը, համաձայն ՀՍԽՀ Քրեական Օրենսգրքի 86-րդ հոդվածի դատական պատասխանատվության է կանչվում:

## Բ. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Խորհրդային Հայաստան»-ի նոյեմբերի 1-ի համարում հրապարակված շրջանային նորմաների համաձայն՝ պետությանը պարտադիր կարգով միս հանձնելու յենթակա յեն ֆերմաներում և ֆերմաներից դուրս հանրայնացված անասուններ ունեցող բոլոր կոլտնտեսությունները:

2. Հանրայնացված անասուններ ունեցող կոլտնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների պարտադիր կարգով միս հանձնելու տարեկան և յեռամսյա պլանները սահմանվում են հատուկ հանձնաժողովի կողմից՝ բաղկացած հետևյալ կազմից՝ շրջգործկոմի նախագահի նախագահությամբ, շրջմատտեսչի, Միսթրեստի լիազորի և շրջհողբաժնի վարիչի անդամակցությամբ՝ անպայման մասնակից անելով նաև շահագրգռված կոլտնտեսության ներկայացուցչին և հաստատվում է շրջգործկոմի նախագահության կողմից ամեն մի կոլտնտեսության, ապրանքային ֆերմայի համար առանձին:

3. Կոլտնտեսությունների հանձնելիք տարեկան մսի պլանը սահմանվում է ՀՍԽՀ Ժողկոմխորհի և Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշմամբ նախատեսված նորմաների համաձայն, յելնելով կոլտնտեսություններում, ֆերմաներում առ 1-ը սեպտեմբերի 1933 թ. հանրայնացված հոտի մայր անասունների ընդհանուր քանակից: Հաշվելով նույն թվում առ 1-ը սեպտեմբերի 1933 թ. յեղած յերկու և ավելի տարիք ունեցող կովեր ու յերինջներ, առ 1-ը սեպտեմբերի յեղած ինն ամսական և ավելի հասակ ունեցող մայր խոզերը, մայր վոչխարները, ինչպես նաև 1932 թ. և առաջ ծնված եգ թոխլիները:

4. Կոլտնտեսությունների համայնացված անասունների հանձնելիք մսի չափը վորոշելիս, ցեղական անասունների գրքում

Յերկրորդ որինակը մնում է գյուղխորհրդում: Մխտրեստի շրջ. լիազորը մինչև ս.թ. նոյեմբերի 20-ը պարտավոր է ընտրովի ձևով ստուգել գյուղխորհրդի կողմից պարտավորագրեր հանձնելու ճշտությունը (իսկությունը):

13. Տնտեսությունների ցուցակները սխալ կազմելու, պարտավորագրերի սխալ լրացնելու կամ բոլոր տնտեսություններին անխտիր պարտավորագրեր չհանձնելու (բացի ներկա հրահանգի Ա. մասի 2-րդ կետի համաձայն՝ մսի հանձնելուց ազատված տընտեսություններից) համար գյուղխորհրդի նախագահը, համաձայն ՀՍԽՀ Քրեական Օրենսգրքի 86-րդ հոդվածի՝ դատական պատասխանատվության է կանչվում:

## Բ. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՍԻ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Խորհրդային Հայաստան»-ի նոյեմբերի 1-ի համարում հրապարակված շրջանային նորմաների համաձայն՝ պետությանը պարտադիր կարգով մսի հանձնելու յենթակա յեն ֆերմաներում և ֆերմաներից դուրս հանրայնացված անասուններ ունեցող բոլոր կոլտնտեսությունները:

2. Հանրայնացված անասուններ ունեցող կոլտնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների պարտադիր կարգով մսի հանձնելու տարեկան և յեռամսյա պլանները սահմանվում են հատուկ հանձնաժողովի կողմից՝ բաղկացած հետևյալ կազմից՝ շրջգործկոմի նախագահի նախագահությամբ, շրջֆինտեսչի, Մխտրեստի լիազորի և շրջհողբաժնի վարիչի անդամակցությամբ՝ անպայման մասնակից անելով նաև շահագրգռված կոլտնտեսության ներկայացուցչին և հաստատվում է շրջգործկոմի նախագահության կողմից ամեն մի կոլտնտեսության, ապրանքային ֆերմայի համար առանձին:

3. Կոլտնտեսությունների հանձնելիք տարեկան մսի պլանը սահմանվում է ՀՍԽՀ Ժողկոմխորհի և Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշմամբ նախատեսված նորմաների համաձայն, յելնելով կոլտնտեսություններում, ֆերմաներում առ 1-ը սեպտեմբերի 1933 թ. հանրայնացված հոտի մայր անասունների ընդհանուր քանակից: Հաշվելով նույն թվում առ 1-ը սեպտեմբերի 1933 թ. յեղած յերկու և ավելի տարեք ունեցող կովեր ու յերինջներ, առ 1-ը սեպտեմբերի յեղած ինն ամսական և ավելի հասակ ունեցող մայր խոզերը, մայր վոչխարները, ինչպես նաև 1932 թ. և առաջ ծնված էգ թոխլիները:

4. Կոլտնտեսությունների համայնացված անասունների հանձնելիք մսի չափը վորոշելիս, ցեղական անասունների գրքում



